

ԼՈՒԳՈՎԻԿՈՍ ԺԶ,

Ե Ի

Ի Ի Բ Ը Ն Տ Ա Ն Ի Ք Ն Ի Բ Ա Ն Տ Ի

Դիմացի պատկերին վրայ աչքդ դարձուր, աշխարհիս խեղճութեանը, ունայնութեանը պատկերն է: Ահա թագաւորական ընտանիք մը որ իւր փառաւոր պալատէն յանկարծ ա-

հաւոր բանտի մը մէջ ընկած, իւր մահուան վճռոյն կսպասէ: Գաղղիոյ Լուգովիկոս ԺԶ-ին թշուառ պատմութիւնը ծանօթ է բոլոր աշխարհի, անոր համար եւ աւելորդ կհամա-



րիմք հոս կրկնէ: — Այս մեր պատկերը անուանի հեղինակի դործ է, ու շատ սրտաշարժ տեսարան մը կրնծայէ: Թագաւորը վերջին անգամն է որ կընանայ, բայց ինչպէս խաղաղ ու հանգիստ. վասն զի հանգիստ է իւր խիղճն ու խաղաղասէր սիրտը: Քովը նստած է թագուհին՝ Մարի - Անթուանէթ. նայէ դէմքին վրայ ինչպէս նկարուած են

տրամութիւնն ու մտատանջութիւնը: Հապամանուկ արքայորդին սիրտդ չըշարժեր որ որը մնալու վրայ է. իրեն չորս կողմը ցաւք եւ արցունք, բայց ինքն ուրախ զուարթ նրստած՝ իւր թղթերուն հետ կխաղայ. խեղճ տղայ, եւ ոչ իսկ կրնայ հասկընալ որ ինքն ալ, հնչրն ալ մնայրն ալ բազդին ձեռքը եղեր են տիւր խաղալիկ: